



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
19.09.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 405-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ «ՀԱՆՐԱՅԻՆ  
ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՐԱՀԱՆԳՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով** «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 5-րդ, 14-րդ և 22-րդ ենթակետերի դրույթներով,

**հիմք ընդունելով** Պալատի խորհրդի 2018 թվականի հուլիսի 4-ի թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի» 67-րդ կետի և Պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգի»-ի 5.4-րդ կետի պահանջները,

**հաշվի առնելով** Պալատի նախագահի 2016 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 405-Լ որոշմամբ հաստատված՝ «Հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման մասին» հրահանգում (**այսուհետ՝ Հրահանգ**) փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հրահանգի 16-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

**«Մեխանիկորեն Անցողիկ միավոր ստացած են համարվում նաև այն հանրային պաշտպանները, որոնք գնահատումն իրականացնելու ժամանակ գտնվում են զորահավաքային զինվորական ծառայության մեջ կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով մասնակցում են Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին»:**

2. Հրահանգի 25-րդ կետը լրացնել հետևյալ պարբերությամբ.

30 հոկտեմբերի 2020թ.  
թիվ 374-Լ

**«Գնահատման հանձնաժողովը կարող է հանրային պաշտպանին տալ սույն կետում նշված չափերով լրացուցիչ միավորներ նաև հետևյալ դեպքերում՝**

**1) գնահատումն իրականացնելու հաշվետու ժամանակահատվածում՝ առնվազն տաս աշխատանքային օրով գտնվել է զորահավաքային զինվորական ծառայության մեջ կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով մասնակցել է Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ոազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին.**

**2) կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով հայտարարված արտակարգ դրության կամ կարանտինի պայմաններում առանձնակի ջանասիրություն և բարեխղճություն ցուցաբերած հանրային պաշտպանին.**

**3) այն հանրային պաշտպանին, որի ընդանիքի անդամն առնվազն 10 աշխատանքային օր մասնակցել է, կամ գնահատման ժամանակ մասնակցում է Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին, ինչպես նաև նշված մարտական գործողություններին մասնակցելու կապակցությամբ վիրավորվել է, անհայր կորել է, կամ զոհվել է:**

**Սույն կետի իմաստով հանրային պաշտպանի ընդանիքի անդամ է համարվում նրա ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները:»:**

3. Սահմանել, որ սույն որոշմամբ կատարված լրացումն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

30 հոկտեմբերի 2020թ.

թիվ 374-Լ

ք. Երևան